Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն,
պրոֆ., պ.գ.դ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյան
27.02.2020

Սույն թվականի փետվարի 27-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում տեղի ունեցած նիստի արձանագրությունից:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝ արաբական երկրների բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Լիլիթ Հարությունյանը, պ.գ.թ., դոցենտ Արաքս Փաշայանը, պ.գ.թ., դոցենտ Գոռ Գևորգյանը, պ.գ.թ. Հայկ Սամսոնյանը, պ.գ.թ. Գրիգոր Վարդանյանը, պ. գ.թ. Արամ Գասպարյանը, բաժնի գիտաշխատող Ա. Ավդալյանը:

ԿԱՐԾԻՔ

Մելիք Հովսեփի Հովսեփյանի պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների համագործակցությունը 1964-1991 թթ.» ատենախոսության վերաբերյալ:

Նշված ժամանակաշրջանում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի (այսուհետև՝ Կոմիտե) և Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների համագործակցության ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական և գործնական կարևոր նշանակություն և արդիականություն:

Թեմայի հետազոտությունը մեծապես նպաստում է Մերձավոր Արևելքի արաբական երկրների հայ համայնքների հետ համագործակցությանն առնչվող մի շարք իրողությունների ճիշտ ընկալմանն ու լուսաբանմանը: Սփյուռքահայության հետ մշակութային կապի

կոմիտեն ստեղծվել է 1964 թ. և իր գործունեության մոտ երեսուն տարիների ընթացքում, բավական դժվար իրողությունների պայմաններում, որը կապված էր խորհրդային շրջանին բնորոշ գաղափարախոսական սահմանափակումների հետ, մեծ աշխատանք է իրականացնել արաբական երկրների հայկական սփյուռքի հետ կապերի հաստատման, ինչպես նաև ամենատարբեր ոլորտներում համագործակցության ձևավորման հարցում: Չնայած այն հանգամանքին, որ Կոմիտեին միշտ չէ, որ հաջողվել է իրականացնել իր առջև դրված խնդիրները և ընդառաջ գնալ հայկական Սփյուռքի հիմնահարցերի լուծմանը, այնուամենայնիվ, կարողացել է օժանդակել հայապահպանությանը, ազգային ինքնության զարթոնքին և նպաստել Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Կոմիտեին հաջողվել է բավական սերտ կապեր հաստատել Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Եգիպտոսի, Հորդանանի և Քուվեյթի հայ համայնքների աշխարհիկ և հոգևոր կառույցների ներկայացուցիչների հետ, և ներկայացնել Խորհրդային Հայաստանն այդ շրջանակներում:

Աշխատանքի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1964-1991 թթ., ինչը համընկնում է արաբական երկրներում հայ համայնքների որոշակի բարգավաճ մի շրջանի հետ, երբ հայկական ազգային կառույցների ինստիտուցիոնալացման փուլն ավարտվել էր և այլևս միտված էր հայապահպանությանը, հայկական կրթական համակարգի և հայկական մշակույթի զարգացմանն ու հայկական ընտանեկան - ազգային արժեքների պահպանմանը: Այս տեսանկյունից, բավական շահեկան վիճակում էին հատկապես Սիրիայի և Լիբանանի հայ համայնքները, իսկ Հալեպը, իրավամբ, համարվում էր Սփյուռքի Մայր գաղութը: Այս իմաստով, երկու կողմից էլ կար մեծ ցանկություն՝ հարաբերությունները զարգացնելու ու խորացնելու առումով:

Աշխատանքի շրջանակներում առաջին անգամ փորձ է արվել ամբողջական կերպով ուսումնասիրել և գիտական շրջանառության մեջ դնել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի համագործակցությունը Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների հետ, ինչը հնարավորություն է տալիս վեր հանել համագործակցության ողջ պատկերը, դրան նպաստած և խոչընդոտած գործոնները, գնահատական տալ համագործակցության արդյունավետությանը, դրա նշանակությանը

Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման հարցում, ինչպես նաև վեր հանել արաբական երկրների հայ համայնքների հետ համագործակցության մի փորձառություն, որը կարող է օգտակար լինել մեր օրերում Հայաստանի և արաբական երկրների հայ համայնքների հետ համագործակցության զարգացման հարցում: Մյուս կողմից, ատենախոսության շրջանակներում բայցի երկուստեք համագործակցությունից, այս կամ այն կերպով ներկայացված է մի կողմից՝ Կոմիտեի նշված շրջանի պատմության մի կարևոր հատված, մյուս կողմից՝ նշված արաբական երկրների հայ համայնքների պատմության զարգացման մի շարք առանձնահատկություններ:

Աշխատանքի դրական կողմերից է ատենախոսության աղբյուրագիտական հենքը՝ փաստագրական արխիվային հարուստ նյութը, հայաստանյան և Սփյուռքի մամուլը, հուշերն ու հուշագրությունները, նաև՝ մասնագիտական գրականությունը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Ատենախոսության մեջ ներկայացված հիմնական դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները, ընդհանուր առմամբ, կարող են օգտագործվել Հայաստան-Սփյուռք հարաբերությունների արդի շրջանի պատմությանը նվիրված դասընթացներում, դասագրքերում և ամենատարբեր ուսումնասիրություններում:

Ատենախոսը՝ Մելիք Հովսեփյանը, իր աշխատանքում հանգամանորեն հետազոտել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծման նպատակներն ու խնդիրները, ներկայացարել Կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները, բացահայտել խորհրդային շրջանում կառույցի գաղափարական և կազմակերպչական առանձնահատկությունները, ի ցույց դրել Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների իրավիճակը՝ ըստ Կոմիտեի և այլ արխիվային փաստաթղթերի ու մասնագիտական նյութերի, նաև՝ պատմական այն միջավայրը, որի պայմաններում Կոմիտեն աշխատել է: Կարևոր է, որ ատենախոսը ներկայացրել է համագործակցության արդյունքներին վերաբերող թվային տվյալներ, որը նաև Կոմիտեի աշխատանքի յուրահատուկ ամփոփումն է: Ուսումնասիրության շրջանակներում վերլուծության են ենթարկվել այն սկզբունքները, որոնցով Կոմիտեն տեղերում համագործակցել է «առաջադիմական» (կոմունիստներ, հնչակյաններ, ռամկավարներ, բարեգործականներ)

կազմակերպությունների հետ: Ուսումնասիրության առարկա են դարձել նաև Սփյուռքում տարածվող թերթերն ու ամսագրերը, հայ համայնքներ գործուղվող մշակութային խմբերն և խորհրդահայ մշակութային գործիչները, նաև՝ Կոմիտեի կողմից նրանց ստանձնած հանձնառությունները: Մյուս կողմից, ատենախոսը լուսաբանել է Սփյուռքի այն կազմակերպությունները և ազգային կառույցները, որոնք կապեր են հաստատել Կոմիտեի հետ և համագործակցել Խորհրդային Հայաստանի հետ:

Միանգամայն ճիշտ են ատենախոսի այն պնդումները, որ Կոմիտեի ստեղծումը իսկապես մեծ իրադարձություն էր թե՛ ՀԽՍՀ-ի և թե՛ Սփյուռքի համար, որը նպաստեց հայապահանությանը և Հայրենիք-Սփյուռք կապերի աշխուժացմանն ու ամրապնդմանը, այդ թվում Մերձավոր Արևելքի արաբական երկրներում: Անհերքելի է նաև այն պնդումը, որ չնայած մի շարք դժվարություններին, որոնք կապված էին թե՛ խորհրդային գաղափարախոսական (Սփյուռքի ազգային կառույցներին «առաջադեմների» ու «հետադեմների» բաժանելը), թե՛ արաբական պետությունների ներքին և արտաքին իրողությունների հետ, որոնցից ամենաազդեցիկն արաբ-իսրայելական պատերազմներն էին, մերձավորարևելյան տարածաշրջանում տիրող բարդ աշխարհաքաղաքական իրավիճակը, այնուամենայնիվ Կոմիտեին հաջողվեց սփյուռքահայությանը համախմբել Հայրենիքի շուրջ, աջակցել Հայրենիքից հեռու ազգային կրթական համակարգի զարգացմանը, որոշակիորեն խթանել հայրենադարձությանը և այլն:

Ատենախոսությունը, սակայն, զերծ չէ նաև որոշ բացթողումներից և թերություններից: Նախ պետք է նշել, որ աշխատանքի առանձին հատվածներ շտկման և խմբագրման կարիք ունեն: Մասնավորապես էջ 83-ում հեղինակը նշում է, որ 1964-1966 թթ. Խորհրդային Հայաստան հայրենադարձությունից հետո սիրիահայերի դավանական պատկերը հետևյալն էր՝ 75% առաքելականներ, 10% ավետարաններ և 20% կաթոլիկներ: Արդյունքում ստացվում է 105%: Ատենախոսության մեջ տեղ են գտել նաև որոշ խրթին ձևակերպումներ: Հեղինակն օրինակ նշում է, որ՝ Սիրիայի հայ համայնքն ուներ բարդ կառուցվածք (էջ 87), բայց չի նշում, թե որն է բարդ լինելու հանգամանքը: Եթե համեմատենք արաբական մյուս երկրների հայ համայնքների հետ, ապա բոլորն էլ ունեն գրեթե նույն կառուցվածքը՝

հիմնված 1860 թ. Ազգային սահմանադրության վրա, դիտարկվում են որպես կրոնադավանական փոքրամասնություններ, ունեն գրեթե նույն դավանական պատկերը (առաքելականներ, կաթոլիկներ, ավետարանականներ): Շահեկան կլիներ նաև, եթե հեղինակը համեմատական վերլուծության ենթարկեր տարբեր արաբական երկրների հայ համայնքների նկատմամբ Կոմիտեի վարած քաղաքականությունը:

Աշխատանքը մեծապես կշահեր, եթե հեղինակը քննարկեր նաև Կոմիտեի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկության, ինչպես նաև Բերիո թեմի նաև զաղափարական տարբերություններով պայմանավորված հարաբերությունների առանձնահատկությունները: Առհասարակ աշխատանքում շատ քիչ տեղ է հատկացված Սիրիայի և Լիբանանի հայ համայնքների հոգևոր կառույցների հետ Կոմիտեի հարաբերությունների քննությանը:

Շահեկան կլիներ նաև, եթե հեղինակն օգտագործեր 2019 թ. Բեյրութում Հայկազյան համալսարանի կողմից հրատարկված «Հորդանանի հայեր» ընդարձակ ժողովածուն, որտեղ տեղ է գտել նաև Հրաչիկ Վարդանյանի «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն և հորդանանահայությունը» (էջ 367-387), Մաղլեն Մեծակոբյանի «Հորդանանի համայնքը ինտեգրման և Մայր Հայրենիքի հետ ունեցած կապի միջև» (էջ 387-414) և Հորդանանի հայ համայնքի վերաբերյալ ժողովածուում տեղ գտած այլ արժեքավոր հոդվածներ: Իրաքահայ համայնքի հետ կապված պատմական իրողությունների բազմակողմանի քննությանը մեծապես կնպաստեր նաև արաբագետներ Կարինե Սամվելյանի և Սեդա Մուրադյանի աշխատանքները: Աշխատանքը կշահեր, թե հեղինակն արաբական երկրների հայ համայնքեր-Հայրենիք կապերն ուսումնասիրելիս ներկայացներ սփյուռքահայ ազգային գործիչների, հայկական դպրոցների տնօրենների ու ազգային գործի նվիրյալների անուններ՝ այդպիսով նյութը դարձնելով ավելի «կենդանի», այլապես հիմնականում նշված են միայն խորհրդային մշակութային և հասարակական քաղաքական գործիչների անուններ, որոնք կամրջող դեր են խաղացել Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման հարցում: Շահեկան կլիներ, եթե ատենախոսը բացի Կոմիտեի արխիվում տեղ գտած փաստական տվյալների գիտական շրջանառումից, կարողանար գիտական

գնահատականներ տալ նաև տվյալ երկրի հայ համայնքին՝ սփյուռքահայության ընդհանրական խորապատկերի առանցքում: Այս դիտարկումն օրինակ վերաբերում է երրորդ գլխի 3.4.՝ Եգիպտոսին վերաբերող ենթագլխին, նկատի ունենալով, որ Եգիպտոսի հայ համայնքը բացառիկ կարևոր դեր ունի արևմտահայության և նաև՝ սփյուռքահայության խնդիրների համակարգմանն ու լուծումներ տալու հարցում՝ որպես հայ ազգային մտքի և մշակույթի զարգացման կարևոր կենտրոններից մեկը Մերձավոր Արևելքում, որտեղ (1906 թ. Կահիրե) ստեղծվել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, հիմնադրվել են առաջին հայկական ազգային մշակութային կազմակերպությունները և այլն:

Կարծում ենք՝ այնքան էլ ճիշտ չէ, որ հեղինակը Մերձավոր Արևելքի արաբական երկրների օրինակով հղում է անում հայ ազգային կուսակցություններին, քանի որ կուսակցությունների գործունեությունն արաբական երկրներում նշված ժամանակահատվածում արգելված էր՝ բացառությամբ Լիբանանի: Հետևաբար, տեղերում գործունեություն ծավալում էին ոչ թե նշված կուսակցությունները՝ ՀՅԴ, Ռամկավար-ազատական, Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան և այլն, այլ դրանց հարող մարզական և մշակութային, կանանց, բարեսիրական և այլ կազմակերպություններ, որոնց հեղինակը հանգամանորեն անդրադառնում է:

Նշված թերությունները սակայն չեն ստվերում աշխատանքի կարևոր նշանակությունը: Ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով: Հեղինակը հանդես է բերել ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակություն, իսկ ատենախոսության հիմքում ընկած արխիվային և փաստական նյութը մեծապես նպաստել է հետազոտվող հիմնախնդիրների բազմակողմանի ուսումնասիրությանը:

Ատենախոսության մեջ քննարկվող հիմնախնդիրներն ու դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած թվով 6 գիտական հոդվածներում, որոնց ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում: Սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Մելիք Հովսեփի Հովսեփյանի «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների համագործակցությունը 1964-1991 թթ.» ատենախոսությունը լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
Արաբական երկրների բաժնի վարիչ՝
պ.գ.թ., դոցենտ Լիլիթ Հարությունյան
27.02.2020 թ.

Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտքարտուղար՝
պ.գ.թ. Գոռ Մարգարյան
27.02.2020 թ.